

83
4-57

1545

888

10/2
xx

2011

2003

Դպրության բարեկարգություն
և օքտոպատություն առ գումարի
12-Հունիս 1885-ի բարեկարգություն

83-2

1-57

ՓԱԲՐԻՑԻԱԿՈՒ

ԴՐԱՄԱ ԵՐԵՎ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ ԱԴՈԼՖԱՅ ՎԻԼԲՐԱԴ

ԹԱՐԳՄԱՆԵՑ ՌՈՒՍԵՐԵՆԻՑ

ԶԵՊԱՐԵՑ ՑԵՐ ԶԵՊԵՐԵՆԵՑ

(Արդարացած Արարայ ամսագլեց)

ՎԱՐԱՐԵԱԿԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԵ ԷջՄԻԱՆՆԻ

1885-ՌՅԼԳ

000348

83-2
4-57
Այսօր հայոց թիվ 24

Փ Ա Բ Բ Ի Ց Ւ Ո Ւ

ԴՐԱՄԱ ԵՐԵՔ ԱՐԱՐՈՒԱՆՑՈՎ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ ԱԴՈԼՖԱՅ ՎԻԼԻՋԱՆԴՅԱՆ

ԹԱՐԳՄԱՆԵՑ ՌՈՒՍԵՐԵՆԻՑ

ԶԱԳՈՐԻԾ ՑԵՐ ԶԱԳՈՐԵԱՆԵՑ

2/8
009
000
1

(Արդարադա՞ն Արդարա՞ն ամառելեց)

ՎԱՂԱՐԺԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԵ ԷջՄԻԱԾՆԻ





Ի Ի Ր Հ Օ Ր

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՔԱՀԱՆԱՅ

ՏԵՐ ԶԱԳԱՐԵԱՆՑԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ՆՈՒԻՐՈՒՄ Է ԱՅՍ ԳՐԲՈՅՎՔԸ

ԵՐՈՒԱՏԱՐՏ ԹԱՐԳՄԱՆԵԶԸ

ՖԱԲՐԻՑԻՈՒՄ

ԴՐԱՄԱՑ ԵՐԵՔ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ.

ՃԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ ԱԴՈԼՖԱՑ ՎԱԼԵՐԻԱՆԴՑ

ԳԱՐՄՈՒԴ, ԱՌՋԱՆՔ

ԵՅԼԵՆՇՏԵՅՆ, դատաստանական քննիչ:
ՌՈԼՖ, տէր գործարանի:
ԻԴԱ, ՌԵՑՆԳՈԼԴ:
ԱԳԱԹԱ, ՇՏԵՐՆ:
ՀՈՒԳՈ, նորա որդին:
ՖԱԲՐԻՑԻՈՒՄ:
ՏԻԿԻՆ ՎՈԼՄՈՒՏ:
ԴԵՄԼԵՐ, սենեկապան Ռօլֆի:
ԱԲԵԼ, Ռօլֆի այգեպանը:
ՔԵԹԻՆ
ՖՐԻԴԵՐԻԿԱ, { ձեռնոց շինողներ:
Դատաստանական պրիստաւ:
Դատարանի երկու գոնապահներ:
Երկու ոստիկան:
Գործողութիւնը կատարվում է մեր ժամանակ Դերմանիայում՝
գաւառական քաղաքների մէկի մէջ:

Ա.Ռ.Ս.ԶԻՆ Ա.ՐԱՐՈՒՄԾ:

Առանձնասենիակ Բոլք գործարանատիրոջ բնակարանի մէջ։ Գ.քասեղան հանդերձ թղթերով, գրերով եւ լրագիրներով։ Գոքի պահարան, Դիկան մէկ քանի սեղանիներ եւ բազկաթուներ։ Դէպի աշ պատուհան։ Բեմի խորքումը գլխաւոր Մուտքը։ Դէպի ձախ ուրիշ բաց դուռը։

ՏԵՍԱՐԱԿ Ա.Ռ.Ս.ԶԻՆ:

ԲՕԼՅ. յետոյ ԴԵՄԼԵՐ. ՎԵՐԺՈՎԱՄԸ—ԻԴԱ.՝ ԲԵՑՆԳՈԼԴ.

ԲՕԼՅ. (մենակ նստած սեղանի մօտ՝ կարգումէ։ Յետոյ վեր է առնում թերթը եւ կարգումէ գրածը)։

Եւ այսպէս, պարոններ, ես ասումեմ, որ եթէ դուք ցանկանումէք ընտրել ձեզ համար ներկայացուցիչ, որ կարող լինի համակրել ձնշեալներին և անսպատականներին, որ չարհամարհի զզացող յանցաւորներին։ այլ աշխատի ժամանակ տալ նոցա ուղղուել իրանց բանտարկութեան ժամանակ, մինչեւ անգամ օգնի նոցա բանտից դուրս յետոյ օգտաբեր լինիլ հասարակութեան։ — Եթէ կրկնումեմ, դուք կամենումէք տեսնել ձեր ներկայացուցիչների թվում այսպիսի համոզմունքներով մի մարդ, այն ժամանակից, հաւանական է, ես կարող եմ լինել մէկը։ Այն ժամանակ ես կասեմ ձեզ . . . :

ԴԵՄԼԵՐ. (Մանումէ, նորա փոքր ինչ կարմրացած երեսը եւ անհաստատ քայլուածքը ցոյց են տալիս, թէ զուարթացած է գինով, կանգ է առնում դրան մօտ եւ ասումէ փոքր ինչ հանդիսաւոր կերպով։

Հաճեցէք հրամայել ձեր հաւատարիմ ծառային, Պ. Բոլք։

ԲՕԼՅ.

Ի՞նչ է ձեզ հարկաւոր։

ԴԵՄԼԵՐ. (Թօտենումէ)։

Նատ տարիներ ես միշտ աղօթք եմ անում ձեր բարօրութեան համար։

ԲՕԼՅ.

ԴԵՄԼԵՐ, դուք դարձեսոլ խմածէք աւելորդաբար։

ԴԵՄԼԵՐԻ

Եւ շատ տարիներ ձեր առողջութիւնը պահպանելու՝ որ բաղմա-
թիւ մարդկանց բարիք անէք . . .

ԲՈԼՖ:

Խելքդ գլուխդ բեր, Դեմլեր, ի՞նչ բանի վերայ ես խօսում:

ԴԵՄԼԵՐԻ

Այնոէս էլ այսօր ես աղօթք էի անում ձեզ համար Սաղմոսեր-
գուի խօսքերով . . .

ԲՈԼՖ:

Ինչու համար հէնց այսօր:

ԴԵՄԼԵՐԻ

Նորա համար որ ձեր հանգուցեալ մայրը դեռ իւր կենդանու-
թեան ժամանակ յանձնումէր միշտ շնորհաւորել ձեր ծնունդի
օրը մեր թոյլ կարողութեան չափ:

ԲՈԼՖ. (Դեռ բոլորովին հանդարտ):

Էլի՛ խելքդ գլուխդ չէ: Իմ ծնունդի օրը այսօր չէ, այլ վաղք:
(Դէմլէ աղջած նայուած նարան): Վաղն է, ասումեմ:

ԴԵՄԼԵՐԻ

Օ՛չ, ի՞նչպէս ես ցանկանումեմ: որ վաղուեան օրը, որքան կա-
րելի է, շատ անգամ կրկնվէր: Այս խօսքերը ասումէ թէպէտ
վաթսուն տարեկան ծերուկը, բայց ձեր մեծահոգի սրտի հետ լաւ
ծանօթը, որովհետեւ դուք շատ անգամ օգնել էք ինձ իմ կեանքի
գժուար բոպէներում:

ԲՈԼՖ:

Կրկնումեմ, որ իմ ծնունդի օրը այսօր չէ, այլ վաղն է:

ԴԵՄԼԵՐԻ

Խսումեմ, ողորմած տէր, լսումեմ ամեն մէկ ձեր խօսքը և ու-
շաղի՛ր եմ բոլոր զօրութեամբ: Երբ որ ես փոքր ինչ խմած էի լի-
նում, դուք միշտ . . .

ԲՈԼՖ:

Այս, ցաւումեմ, որ միշտ ձեզ հետ ներողամտութեամբ եմ վա-
րուել: Դնացէք, թողէք ինձ, ես հիմա դրաղուած եմ:

ԴԵՄԼԵՐԻ

Ովկիմ բարի Պ. Բոլֆ: Թէպէտ ես սուրբ մարդ չեմ. . . .

ԲՈԼՖ:

Իհարկէ, չէ:

(Իդա թէյնգօլդ մտնումէ մնալով առանց նկատելու. չի ծածկում իւր զարմացքը):

ԴԵՄԼԵՐԻ

Բայց առանց հաւատի միւս կեանքում, մարդ անշուշտ կկորչի:

ԲՈԼՖ:

Դիտեմ. հեռացէք:

ԴԵՄԼԵՐԻ

Հիմա պէտք է սարսափով նայել մերձաւոր ապագայի վերայ թէ
լնդհանրապէս և թէ մասնաւորապէս, վասն զի մարդկութիւնը
ընկել է վտանգաւոր մոլորութեան մէջ:

ԲՈԼՖ:

Դէ վերջապէս, դուրս կերթաք արդեօք:

ԴԵՄԼԵՐԻ

Դուրս եմ գնում: . . . : Եւ ինչպէս լսումես ամեն կողմից չեն
հաւատում մարդիկ Աստծուն . . .

ԲՈԼՖ. (Կեր է կենում, հանդարտ, բայց խիստ կերպով):

Բաւական է. շնորհակալ եմ ձեզանից: Դուրս գնացէք:

ԴԵՄԼԵՐԻ. (Նպումէ նորա վրա ուշադրութեամբ, յետով գլուխը շարժելով):

Դուրս գնացէք: Ինչպէս կըհրամայէք, խոնարհութեամբ համ-
բուրումեմ ձեր ձեռքքը:

ԲՈԼՖ. (անհամեր կերպով):

Դէ կըթողնէք արդեօք ինձ հանգիստ:

ԴԵՄԼԵՐԻ. (Գարձեալ գլուխը շարժելով):

Թողնումեմ հնազանդուելով հրամանի: (Հետառութէ ինչն իրան
+ լինջալուլ): Ես կըցանկայի միայն իմ բարերարիս . . .

ԲՈԼՖ:

Դնացէք և զովացէք ինչպէս պէտք է:

ԴԵՄԼԵՐԻ. (Գլուխը շարժելով):

Լան է, ինչպէս պէտք է կըզովանամ: (Դառնէն է գնում, զննացք-

Ի՞ւ Տ. Իւ յիշութեն, «ը խօսակցութեան ժամանակ անցնաւէ բերի աջ էսպ-
ճը և լսում զարմացան ժայի գոտի նորա խօսւթեը»:

ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ.

ԲՈԼ.Ֆ. ԻԴԱ-ՌԵՑՆԳՈԼԴ:

ԻԴԱ. (Հքեղ հագնուած՝ կուրծքին ծաղիկներ):

Բարեւ ձեղ Պ. Ռոլֆ:

ԲՈԼ.Ֆ. (տեղեցը վերկենալով եւ տեսնելով նորան՝ զարմացած):
Ես չեմ հաւատում իմ աչքերիս: Ես տեսնումեմ իմ տան մէջ
Տ. Իւնգոլդին:

Ա.յն, Իւնգոլդին, երգչուհուն, որին կը յուսամ, զեռ մոռա-
ցած չէք: Կամ թէ ես այնպէս փոխուել եմ այն օրից, երբ դուք
ինձ չէք տեսել:

ԲՈԼ.Ֆ. (գլուխ բացասական նշան տալով):
Քոլորովին ընդհակառակը: Ես ապշել եմ ձեր մէջ ամենափոքր
փոփոխութիւն յըգտնելովս:

ԻԴԱ. (Նորա խօսքերը ընհատելով):
Ես նոյնպէս ձեր մէջ փոփոխութիւն չեմ տեսնում: Զարմանում
եմ. ինչպէս դուք չէք վրնդում այդպիսի ծառային ձեր տանից:

ԲՈԼ.Ֆ. (Ժպտալով).

Ընդհակառակը նա ինձ պէտքէ երկայնմտութեան մէջ վարժուե-
լու համար:

ԻԴԱ:

Ա.յդպիսի արբեցողը:

ԲՈԼ.Ֆ.

Նա ունի իւր սեւ օրերը, որոնք երբեմն սկսումեն առաւօտուա-
նից. բայց նա—հին և անձնուէր ծառայ է. նա իմ հանգուցեալ
հօր մօտն էլ էր ապրում: Իւր պարտաւորութիւնները շատ լաւ է
կատարում: Երբ լուրջ է լինում:

ԻԴԱ:

Խոկ այդ ե՞րբ է պատահում նորան:

ԲՈԼ.Ֆ.

Քիչ սառը ջրում լուացուելով նա շուտ է սթափվում: մէկ քա-
ռորդ ժամից յետոյ գուք նորան չէք ճանաչիլ . . . : Բայց ի՞նչ
խօսակցութիւն նորա մասին: Ես գեռ չեմ ինդրել ձեղ նստելու,
(հրա-իրո-մէ ունելի նորալուն): Դէ ասացէք, ի՞նչ պատճառաւ ձեղ
տեսնելու պատուին արժանացայ իմ տան մէջ:

ԻԴԱ. (Նստելով):

Այս տեղից անցնելուս պատճառաւ միայն:

ԲՈԼ.Ֆ.

Հապա դուք ինչո՞ւ ըըհրաւիրեցիք ինձ ներկայանալ ձեղ մօտ,
այլ նեղութիւն էք յանձն առել գտնել ինձ:

ԻԴԱ. (Փոքը ինչ յուզուած):

Ես ցանկացայ նայել, թէ դուք ի՞նչպէս էք ապրում (Ժղագալ),
կամեցայ տեսնել, թէ ճանաչո՞ւմէ արգեօք ինձ իմ նախկին երկր-
պագուն:

ԲՈԼ.Ֆ.

Օ՛, կը կնումեմ: այդքան տարիներից յետոյ ես չեմ տեսնում
ձեր մէջ բոլորովին փոփոխութիւն:

ԻԴԱ. (Կատակ անելով եւ ակ քաշելով):

Մեր վերջին տեսութեան օրից անցած գնացած տարիների թուի
մասին միայն մի' յիշէք: Սակայն, ես ունիմ ուրիշ նպատակ էլ
(հանելով փողի փոփք պահարան): յանձնել ձեղ նուէր յօգուտ ձեր
հիմնած ընկերութեան: Ես գիտեմ դուք—մարդկութեան բարե-
կամն էք . . . : Բայց մոռացել եմ այդ յարգանայ արժանի ըն-
կերութեան անունը . . . :

ԲՈԼ.Ֆ.

«Բանտարկութիւնից ազատուածներին օգնելու ընկերութիւն»:

ԻԴԱ:

Ա.յն, հիմա միտքս բերի: (Վեց է վենա-): Վաղուց չէ որ ես
կարգացի լրագիրների մէջ ձեր նշանաւոր նառը անհրաժեշտ ըն-

կերութիւնների հաստատելու կարեռութեան մասին և յափշտակուած ձեր ճառով՝ շտապումեմ և իմ լոման ձգելու զրամարկը . . . : (Տալիս է նորան բանի պահ): Խնդրումե՞ր լնդունել ինձանից այդ լիովին բարի և գեղեցիկ գործի համար:

Բ 01. ֆ:

Այդ գումարը չափազանց մեծ է:

Ի Գ Ա:

Ընդհակառակը:

Բ 01. ֆ. (մօտենումէ գրասեղանին):

Ես միայն այժմ նկատումեմ ձեր մէջ փոփոխութիւն: Առաջ գուք փոքր ինչ ծաղր էիք անում «մարդկութեան բարեկամներին»:

Ի Գ Ա. (սրտի լորդեց ան քաշելով):

Գիտեմ և յիշումեմ յամօթ ինձ: Առաջ ապրումէի միայն ինձ համար:

Բ 01. ֆ. (գումէ ապահովագիր):

Կամենումէք ասել ձեր ճարտարութեան համար: Եւ ի՞նչ ճարտարութիւն: (Վ' իշաղլու): Ես յիշումեմ այն երեկոյթները, երբ լսումէի ձեր երգեցողութիւնը օպերայի մէջ. խելքս թռչումէր: Եւ որքան ծաղիկների դափնեայ փունջեր ձգումէի բեմը այն միջոցին: (Տալիս է նորան ապահովագիր): Ի՞սկ ընդունումէ այն և անդոյն իշրջու նոյնումէ սեղանի վերայ: Յետպայ վերաբառումնումէ ունի նորանը): Եւ այսպէս, դուք այս տեղ մեզ կուրախացնէք:

Ի Գ Ա. (նստելով):

Բ 01. ֆ.

Մեր քաղաքում կօնցերտ տալով:

Ի Գ Ա. (բացասական նշան անելով):

Ո՞չ. կօնցերտների ժամանակը ինձ համար անցել է:

Բ 01. ֆ.

Ի Գ Ա. յաւիտեան:

Ես այնքան երգել եմ, որ էլ երգել չեմ կա-

մենում: Միթէ կարելի՞ է այնպիսի յիմարութիւն անել, և բոլոր յաղթանակներից յետոյ—տեսնել հասարակութեան մէջ կատարեալ անտարբերութիւն:

Բ 01. ֆ:

Դուք ի՞նչ տխուր տրամադրուած էք. յնայելով, որ գեռ բոլոր ըովին երիտասարդ էք և թովիչ՝ ինչպէս առաջ:

Ի Գ Ա. (տխուր ժպտալով):

Ծնորհակալ եմ ձեզանից. բայց զուր տեղ մի՛ ինդրէք: Ես վըճռել եմ այլ ևս բեմի վերայ չերեալ. զգումեմ, որ պառաւումեմ: Այժմ ես կամենումեմ հանգստանալ, սեպհական բնակարան ունենալ, ուր կարողանամ ապրել ինչպէս իմ տան մէջ: (Քօլի լուին ներդաւ է նայում: Խոտա ինչն իլան): Ի՞նչպէս նա կրզարմանայ . . . (բայց բայց այս) ո՞չ. եթէ ինձ մօտ լինէր իմ երեխան:

Բ 01. ֆ. (նպառմէ նորա վերաս գարմացմաբ):

Ի՞նչ ասացի՞ք. ձեր երեխա՞ն:

Ի Գ Ա. (տիրութեամբ):

Այս, իմ երեխան:

Բ 01. ֆ:

Ես չեմ հասկանում, թէպէտ լսել եմ, որ դուք ամուսնացած էք եղել . . . շատ տարիներ նորանից . . . շատ ջահիլ ժամանակ . . . Բայց թէ դուք ունեցած էք որդիք, ես չգիտէի:

Ի Գ Ա. (քիչ լուսութիւնից յետոյ):

Ո՞չ ոք չգիտէր այդ մասին:

Բ 01. ֆ:

Հըմմ: Ես ձեզ հասկանումեմ: Ի՞նչու հրաժարուեցիք ձեր երեխայից, կամենումէք ասել (լուսումէ):

Ի Գ Ա. (վեր է կենում եւ մօտենումէ պատուհանին դէպի աջ, ինքն երան:

Ինչպէս ծանր է մարդու անցեալ վիշտը միտք բերելը: Բայց ես կամենումեմ և պարտաւոր եմ: (Վ' արի պարանը պարանին, բայց բայց այս): Ես կարող եմ պատմել ձեզ այս պատմութիւնը. բայց ես վախումեմ, որ ձեզ գժուար լինի հասկանալ ինձ:

Բ 01. ֆ. (նորան վեր է կենում, անշարժ, սառնութեամբ):

Ես կաշխատեմ ձեզ հասկանալ:

ԻԳԱ. (Աստումէ ձեռքով ծաժկելով աչքերը, խոր ախ է քաշում, յետոյ ասումէ չնայելով, թօլֆի վերաց):

Երբ ես գեռ ջահիլ էի, ոհ. ինչպէս յիմար էի այն ժամանակ: Այն միջոցին էլ ես երգումէի: Ես ծանօթացայ մի ջահիլ երիտասարդի հետ. գնահատեցի նորա խելքը, ջերմ զգացմունքը, մոքի եռանդը. և տեսնումէի նորա մէջ շատ ընտիր յատկութիւններ. մենք միմեանց սիրեցինք և ես ամուսնացայ նորա հետ: Յետոյ յանկարծ ես հոչակաւոր անուն ստացայ. իշխանները և կոմսերը ինձ հաճոյանալ էին աշխատում: այլ ես իմ ամուսինը ինձ չէք դուր գալիս. նա կասկածոտ, կամապաշտ, դիւրագրգիռ էր. նորա ձեւերը և իրան պահել չկարողանալը բարկացնումէին ինձ . . . : Նա առաջուան պէս կամենումէր ինձ հրամայել: Մենք շատ անգամ կովումէինք միմեանց հետ: Վերջապէս մէկ երեկոյ—այդ սարսափելի՛ երեկոյ էր—նա փորձ փորձեց ինձ էլ իրան էլ սպանել: Ես նորա ձեռքից խլեցի խենջարը. տանից դուրս արի—և նա էլ չլերագարձաւ:

ԲՈԼՅ. (Քիչ լուսութիւնից յետոյ):

Ոչ երբէք:

ԻԳԱ.

Ոչ երբէք: Նա սկսեց ուրիշ քաղաքում զբօսասէր կեանք վարել . . . : Ես չեմ կամենում նորա անունը տալ: Այնպիսի կեանքը հասցրեց նորան սիսալանքների, իսկ յետոյ յանցաւորութեան . . . որ անպատլութեամբ ծածկեց նորա անունը . . . : Մեր բաժանուելուց կես տարի յետոյ, ծնեցի երեխայ: (Աւ է կենուարելից և առշատից դողումէ): Նորա դուստրը:

ԲՈԼՅ.

Հըմմ:

ԻԳԱ.

Մայր գառնալով՝ ես ինձ անբախտ էի համորում և ասումէի իմ ամուսնուն. ջախջախուած բարոյապէս, հիւանդ փիզիքապէս և մասամբ արդէն կշտացած կեանքից, ես մօրաքրոջս մօտ ապաստանարան գտայ, որ իւր ամուսնու հետ ապրումէր լեռնային գիւղերից մէկի մէջ, ուր նա պանդոկ էր պահում: Նորա ազնիւ և

պարզ մարգիկ էին. այժմ նոքա արդէն կենդանի չեն: Երբ որ ես կազդուրուեցի, այն ժամանակ իմ մօրաքոյրա, որ երեխաներ յունէր՝ խնդրեց որ տամ նորան իմ երեխան գաստիարակելու, հաւատացնելով թէ, երեխան միայն իմ ազատութիւնս կըկորդի մէկ քաղաքից միւսը փոխագրվելու ժամանակ, և թէ, առանց երեխայի վերագառնալով դէսի քաղաքական կեանքը, ես զարձեալ ուրախ կըլինիմ և կսկսեմ պարապել իմ արհեստովս: Ես համաձայնեցի մօրաքրոջս խնդրեցին և թողնելով նորա մօտ մանուկը, երգումէի թատրոնի բնմի վերայ և հնձումէի դափնիներ բոլոր մայրագաղաքներում: Յաղթանակների ետելից վազ էի տալիս, նորա համար՝ որ նոքա խեղդումէին իմ մէջ թունաւորուած անցեալիս զգացողութիւնը (առանց վագանունեան) և երեխայի մասին միտքս . . . : (Խոր հաւաալնետ է աղջական): Այսպէս անցնումէին տարիներ և ոչ ոք չէր իմանում այդ բանը: Ինձ ամօթ էր գրել, կամ ասել այդ անծանօթ էակին՝ գու իմ երեխաս ես, վերագարձի՛ դէսի քո մայրը. իսկ մօրաքոյրա այնպէս բախտաւոր էր և բաւական՝ գաստիարակելով իմ դուստրը . . . : (Յա-շի յաժանելով էլ Յայնը): Բայց երբ որ իմ դուստրս զարգացաւ . . . :

ԲՈԼՅ. (գարմանալով):

Զարգացաւ:

ԻԳԱ.

Երբ որ ես սկսայ վարել աւելի հանդարտ կեանք, ցանկացայ այլ ևս միայնակ չմնալ, այլ ունենալ ինձ մօտ մէկին, որի հետ կարողանայի ես կապուել բոլոր սրտովս . . . : Այն ժամանակ կամեցայ գրել իմ դատերս որ գայ մօտս: Բայց նա զմեց: Նա չէր կամենում: Իմ բոլոր նամակներս դարձնումէր ինձ: Ոչինչ չէր ընդունում ինձանից, ոչինչ: Ես տեսնումէմ, դուք դատապարտումէք ինձ . . . : Դատապարտեցէք ոչ թէ մենակ ինձ, դատապարտեցէք և իմ դատերս:

ԲՈԼՅ (գրոցի յանկար դադար տալուց յետոյ):

Ես չունիմ իրաւոնք գատապարտելու ում և իցէ: Բայց ներեցէք ինձ՝ ես ապշած եմ ձեր զրոյցով. ես չեմ կարողանում հաս-

կանալ . . . : Թոյլ տուէք առաջարկել մէկ հարց . ի՞նչ բանի համար է ձեր պատմութիւնը : Ինչո՞ւ համար դուք յայտնեցիք ինձ յանկարծ այդ գաղտնիքը :

ԻԴԱ. (փոքր ինչ յուզուած):

Ինչո՞ւ համար . — ճշմարիտ ես ինքս էլ չգիտեմ : Վաղուցուայ տնօցածը այնպէս կենդանացաւ իմ յիշողութեանս մէջ, որ ակամայ պատմեցի նորա մասին, բոլորովին մոռանալով, որ ես ունիմ ձեզանից մի մեծ խնդիր, եթէ միայն համաձայնէք կատարել այժմէն իոկ . . . :

Թ01.3. (բաւական սառնութեամբ):

Կ'աշիատեմ որքան կարելի է :

ԻԴԱ:

Բաց ասեմ և համառօտ : Ես հրաժարուեցի աղջիկո ինձ մօտ պահելու մոքից, որովհետեւ նա ինքը չէր ցանկանում ապրել ինձ հետ : Բայց միոյնակ մնալ էլ չեմ կամենում : (Անվագահ) . Ինձ խորհուրդ տուին ընկեր շինել այն ջահիլ տիկնոջը, որ ընակումէ ձեր գործարանի շինութեան մէջ . . . կարծեմ ձեռնոց շինելու բաժնում :

Ա.յ՛:

Թ01.3:

ԻԴԱ:

Նա կատարումէ ձեզ մօտ համարակալի պարտաւորութիւն (Քադր Էն Շխուարանիւանէ՝ ընդհապէլով Էնուէրը) : Ագաթա Շաերն . . . ջահիլ որուեայրին . . . ես կցանկայի իմանալ ձեր կարծիքը նորա մասին և ինդրել ձեզանից ծանօթացնել ինձ նորա հետ :

Թ01.3. (մօտենումէ լուկ գրասեղանին եւ զանգահարումէ) :

Ձեր ցանկութիւնը հէնց այս րոպէիս կ'կատարուի :

ՏԵՍԻԼ ԵՐՐՈՐԴ.

Ն03Ն Ա.ՆՉԻՆՔ Եւ ԴԵՄԼԵՐ :

ԴԵՄԼԵՐ : (մանումէ, երան վայելուչ պահելով) :

Դուք ինձ կանչումէիք, Պ. Յօլֆ :

Թ01.3. (այս միջոցին, երբ Խոա զարմանալով մտիկ էր տաւես Դեմլերի վերաց):
որի հետ պատահեց այնպիսի արագ փոփոխութիւն) :

Տ. Շաերնը գեռ գրապենեակումն է :

ԴԵՄԼԵՐ :

Ա.յ՛. Պ. Յօլֆ : (Նայո-մէ չ-ը ժամացա-ցի վէրաց): Դեռ ամբողջ ժամ է մնում մինչեւ պարապմունքի վերջացնելը գործարանում :

Թ01.3:

Ասացէք Տ. Շաերնին, որ ես ինգրումեմ նորանից այժմին իոկ վերջացնել պարապմունքը և գալ այստեղ . ինձ հարկաւոր է տեսնել նորան :

ԴԵՄԼԵՐ :

Ա.յ՛ րոպէիս կ'կատարուի, Պ. Յօլֆ : (Պո-ը է գո-ը) :

ԻԴԱ. (Կեղծ զուարթութեամբ):

Դուք ճշմարիտ էք, այդ արբեցողը այժմ չի ճանաչվում, բոլորովին լուրջ է և իրան վայելուչ է պահում :

Թ01.3:

Նա սառը ջրում լողացաւ և իւր գլխին քարտզ կարդաց : Դուք այս րոպէիս կծանօթանաք ջահիլ որբեացրիլ հետ . բա՛, ի՞նչ պատահեց ձեզ :

ԻԴԱ. (Հանք է անում ծածկել իւր մէջ անհանգստութիւնը) :

Ո. Ջինչ : (Պայշտական նայուած): Բայց ի՞նչպէս է ձեր կարծիքը նորա մասին :

Թ01.3:

Ամենալաւ (Պէրմ զբացանուլը զանդելով) . Նա զարմանալի բարի է և սաստիկ համակրելի : Իւր պարտաւորութիւնները գրասենեակում նա օրինակելի ճշտութեամբ է կատարում . միշտ տիսուր է և լուռ : Ես կարծումեմ որ իւր կեանքում շատ գաւնութիւններ է փորձել :

ԻԴԱ. (իւր մէջ յուզուած) :

Ո. Շ. : (Բայշտական) Ինձ ասացին՝ թէ նա շատ պարկեշտ կեանք է վարում և միանութիւնը սիրումէ :

Թ01.3:

Ա.յ՛, ճշմարիտ է : Նա կրթութիւն է ստացել իւր կարողութիւ-

Նից բարձր. նու միայն չի ապրում, այլ մի չափահաս այրի կնոջ հետ, որ պարապումէ ծովէր մաքրելով. ապրումէ շատ պարկեցած շինութեան եռելի կողմում սրահի մէջ, տանիքի տակ։ Ի՞նչ պատահեց ձեզ։

ԵՒԱ. (յուղուած վեր է կենում տեղից)

Նա գալիս է: (Երանդութեան անցնելը բեկով Յանի բայց առաջ պահանջական է)

ՏԵՍԻ ԶՈՐՈՅԱՆ

ՅՈՒՅԹ · ԻԳԱ ՀՀ ԱԳԱԹԱ ՇՏԱՐԴԱ:

Դուք կամենումէիք ինձ տեսնել, Պ. Շահ:

ՊՈԼՅ. (Կանգնելով պատռահանդիքը և բարեկամականությունը)

Խնդրեմ նստէք: (Մարի պալով իւղայէ կողմը ինչն իրան): Ինչո՞ւ
համար է թագչում, (բացի այս) Գործը յատկապէս ինձ է վե-
րաբերում, այլ ձեզ, Տ. Շտերն (Ալեքսանդր Անդրեյ Շտերն առ-
յացաւէլով): Ես լսել եմ որ դուք մտադիր էք ինձ թողնելու:

Ա.ԳԱՅԻՆ, (զարմանալով):

Այդ ժվարքաց ձեզ: Ես ընտառ մտքուիս անգամ ցեմ անգորեւ

ԲՈԼ. Յ. (Վարանեալ Ճ՛ռումէ սուր Հայեացք Խդայի վերայ, որ կանգնած դրան մէջ ուշադրութեամբ զննումէ Առաթաւեն),

Ինչ և իցէ, հաւանական է, որ ես այնպէս չեմ հասկացել: Երեւան, ձեր անունով առաջարկութիւն է արած, որի մասին դուք Աղքատէք ոչինչ: (Նոր յէս-մէ հայաց իդայի վըրայ): Զեզ գովել են մի տիկնոջ առաջ՝ առաջարկելով նորան բնդունել ձեզ իւր մօա ոնեւու:

ԱՐԵՎՈՅ, ԿԱՐԵՎՈՅ ԽՈՎՈՅ ՄԵՐՈՅ ՀԵՐԵՎԱՆ

Digitized by srujanika@gmail.com

(ՊՈԵԼՔ բոլորովին տարակուսած եւ յուգուած՝ մտիկ է տալիս լուիկ երկուսի վերաց էլ, Ագաթան տեսնելով, որ Խոհան մօտենումէ իրան, մի քանի քայլ յետ ու յետ է գնում, ըստումէ աթոռի մէջքը եւ մտիկ է տալիս նորա երեսին պաշտոնական)։

ի՞ՌԱ, (պղևագումած, աշխատելով պահպանել անդորրութիւն, Բօլֆի հայեցուածքին հայեցուածքը),

Այս այդ ես եմ: Խնձ առիթ էր հարկաւոր ձեր տունը գայու:

Խս ոչ թէ ինձ ընկերակից էի պառռում։ այլ իմ գուստը։ (Դաս-
նալով դէպի Ա. Հաննաս՝ ահա մայ ճիշն—նախելով)։ Դու ուրեմն
ինձ ճանաչեցի՞՞:

Ա.Գ.Ա.Թ.Ա., Հիմժոռ մտիկ տալով բոլոր ժամանակ իդայի վրայ:

Ճանաչել գժուար չէր: Քիչ անգամ եմ տեսել ձեր լուսանկար պատկերը: (Դէղի Ռօֆը Շահնաւով): Դուք ուրիշ ոյինչ չունիք առելու ինձ, Պ. Բօլֆ:

ԻԴԱ. (յետ ու յետ գնալով դէպի դուռը)

Ո՞ւ դու այսպէս այս տեղից գուրս չես գնալ: Վերջապէս ես տես-
նումեմ քեզ մօտից . . . : Ո՞չ. ինչ հայեցուածք: Բայց դու
պէտքէ ինձ լսես . . . մինչեւ այն ժամանակ դու այս տեղից գուրս
չես գնալ: Ես անիրաւ էի, խոստովանվումեմ այս նորա առաջ, քո
առաջ, երկնքի առաջ: Ես վաղուց ինձ դատապարտումեմ՝ դորա
համար և չարչարվում: Եթէ մայրը ասումէ այսպէս բացարձակ
իւր դստերը, այն ժամանակ դուստրն էլ պէտք է ներէ իւր մօրը:
(Դատասաւով բեղի թօնք): Օգնեցէք ինձ՝ համոզել նորան:

ԱՐԱՅՈՒԹՅՈՒՆ (Կողմանին)

Ս.յստեղ ոչ ոք օգնել չի կարող. այդ բոլորովին զուր է։ Քսան
տարուայ ընթացքում դուք ինձանից հրաժարուեցիք և մոռացաք
իմ գոյութեան մասին. և այժմ կարծումէք, որ այսպիսի ըն-
թացքը կարելի է մոռացուիլ և ներուիլ դստեր կողմանէ։ Եթէ ու-
րիշները ներել են, ես ներել չեմ կարող, չունիմ կարողութիւն։
Երբ որ դուք ապրումէիք առանց ինձ, այն ժամանակ ձեր կուռքն
երաժշտութեան արուեստն էր, դէ՛ գարձէք գարձեալ դէսի նա։
Կրկնեցէք դորա հետ, ինչ որ ասել էիք ձեր՝ ինձ գրած նամակնե-
րի մէջ։ ասացէք ձեր (հու-ւ-ին) նախկին սիրոյ առարկային, որ
դուք ձեզ միայնակ էք զգում, որ դուք պտուումէք հասարակու-
թիւններ, որ ձեզ առանց սիրոյ այդպէս ակրելը սրանեղութիւն-
է։ Արուեստից պահանջեցէք սէր և հասարակութիւններ, այլ ոչ
թէ ինձանից։

Դուռաստ իմ։ Զաւակս։ Ոչ այդ մենակ չէր իմ շարժառիթը։
Եթէ գու բոլոր պահենայի՞ր։



Ա.Գ.Ա.Թ.Ա.

Ես գիտեմ . — այդ մասին դուք գրել էիք ինձ : Որովհետեւ ամաչումէիք իմ հօր վարքից, այդ պատճառով չէիք կարողանում, չէիք ցանկանում ինձ — նորա դստերը տեսնել : Ահա երկրորդ պատճառը : Բայց թէ ես ձեր դուստրն էի, թէ դուք պատասխանատու էիք իմ գոյութեան համար, թէ ես կատարեալ իրաւունք ունէի ձեր սիրոյն — այս բոլորը մի փոքր անգամ ձեզ չէր ծանրացնում : (Նկատելով իւրայի ցանկութեանը նորան պատասխան առայս) : Հապա ով, եթէ ոչ դուք թոյլ տուեցիք գաստիարակել ինձ գեղջկական գերդաստանի մէջ, Միթէ դուք չտուեք ինձ երեխայ ժամանակս օտար ընտանեաց, ուր կարող էին ինձ անել՝ ինչ կտմենային : Ճշմարիտ է, այդ գերդաստանը բարի էր դէպի ինձ, ինձ չիշացրեց . այն փողերով, որ դուք առատութեամբ այնպէս ուղարկումէիք՝ ես հագուստ ունէի և կուշտ էի : Բ՛չ, ես ոչ մի բանում պակասութիւն չունէի, մինչեւ անգամ մտերմութեան զգացմունքի մէջ ինձ չէին մերժում այն պատճառաւ՝ որ այդ ընտանիքը ինձ սիրումէին ինչպէս իրանց դուստրը : Բայց դուք, ինչպէս հիմա ձեզ տեսնումեմ այնպէս զարդարուած՝ ինձ համար ուրիշ մարդկանց դասակարգից էք, դուք, ինչպէս առաջ, նոյնպէս և այժմ ; — ինձ համար բոլորովին օտար էք : Մի՛ արգելէք ինձ, ես ձեղանից ոչինչ չեմ կամենում : Մնաք բարեաւ :

ԻԴԱ :

Ո՞չ, ո՞չ, ոչ : (Կանչնութեան առաջ) :

Ա.Գ.Ա.Թ.Ա. (զայրացած) :

Մի խափանէք ինձ դուրս գնալու : Հեռացէք դունից : Կրկնում եմ, ինձ մի՛ արգելէք :

ԻԴԱ : (Վախենալով հեռանումէ դռնից) :

Եւ այսպէս է խօսում դուստրը իւր մօր հետ :

Ա.Գ.Ա.Թ.Ա. (մօտենումէ գրանը, յետոյ կանգ է առնում երեխը շուռ մալով դէպի) :

«Իւր մօր հետ» : Ես ձեզ բոլորը կասեմ մնաս բարեի ժամանակ, ինչ որ մաքումս ասել եմ իմ ամուսնայ գերեզմանի մօտ : Նա ինձ համար ամեն բան էր՝ հայր, մայր, բարեկամ : Ես այն սիրովն

եմ սիրում՝ նորան, որից դուք հրաժարուեցիք . ես նորան սիրում էի այնպիսի մաերմութեամբ և շնորհակալութեամբ, որ մեռնելու միջոցին առաջ ինձ . «Ո՛չ, որքան ես քեզ հետ երջանիկ էի» : Նա ազատեց ինձ այն ժամանակ, երբ հեռացայ գիւղից, հալածուած աշխարհ տեսնելու ծարաւութիւնից, ուր ինձանից թագնուել էին մայրս և հայրս : Եւ երբ որ ես իմ կամքիս թողած՝ մօտ էի անկման, նա ինձանից ձուլեց պատուաւոր կին . . . : Նա տուեց ինձ հոգեկան խաղաղութիւնն, որի մասին ձեր հասարակութեան մէջ սակաւներն ունին հասկացողութիւնն, որը ես էլ այն ժամանակ չունէի : Նոյնպէս նորան եմ պարտ իմ կրթութեամբ : Եթէ դուք տայիք ինձ դորա մի մասը միայն, — ո՛չ, ինչպէս կսիրէի ձեզ : (Հապի պահէլով) : Բայց որ այժմ՝ լաց եմ լինում, մի՛ կարծէք թէ ձեզ համար է իմ լացս . . . : Այդ արտասուքը — է պարզեւ իմ ամուսնոյ յիշատակին : Երեք տարի է, որ նա գերեզմանումն է . Նա չի կարող ասել ինձ՝ ինչպէս դուք՝ «արի՝ ինձ մօտ» : Բայց ես կմնամ նորա հետ . . . : Իսկ ձեղանից ինդրումեմ թոյլ տալ ինձ : Գոհութիւն Աստուծոյ ես կարօտութիւն չունիմ ոչ ինձ համար ոչ էլ իմ երեխայիս : (Կամենութէ հետանալ) :

ԻԴԱ : (յուզուած յոյժ, ձեռքը քսումէ երեսին) :

Ինչպէս (Բղավիլով) : Կաց կաց . . . : Այս ի՞նչ բան է . . . :

ՐՈԼՅ. (մօտենումէ Իդային, մինչդեռ Ագաթա կանգնած էր ապշտե) :

Ի՞նչ պատահեց ձեզ :

ԻԴԱ :

Նա երեխայ ունի : Միթէ նա այդ յասե՞ց :

ՐՈԼՅ. (զարմանալով) :

Միթէ դուք չգիտէի՞ք :

ԻԴԱ :

Ինչպէս կարող էի իմանալ, երբ նա ինձ ոչինչ չի գրել : (Դէպի Ա.Գ.Ա.Թ.Ա.) : Երգում եմ տալիս քեզ . ասած դու երեխայ ունիս : Իմ գտտեր զաւակ ։ . . :

Ա.Գ.Ա.Թ.Ա. (դէպի մայրը ցաւակցական զգացմունքի հետ կուռելով) :

Դուք ինձանից ի՞նչ էք ուղում :

ԻԴԱ:

Քո երեխսցիդ ես ովինչ չեմ արել: Ես ցանկանումեմ նորան տեսնել: Ես կամենումեմ նորան սիրել այնպէս, ինչպէս ոչ ոքի չեմ սիրել: Ես կամենումեմ նորան վարձատրել բոլոր այն չարութեան փոխարէն, որը գու կրել ես ինձանից . . . : (Դաւանալով Բօլիչն): Օգնեցէք ինձ համոզել նորան: Ես կդաստիարակեմ նորա դուստրը, ինչպէս արքայազն կամ եթէ նա արու զաւակ ունի . . . : (Բօլցը հասպարառ-մէ Շլ-իլ շարժելով): Ա՛խ, արու զաւակ: Ես ոչինչ չգիտէի: Թոյլ տուր նայել նորա վերայ: Կամենումեմ ապրել նորս: Համար: Թոյլ տուր ինձ լինիլ նորան մայր: Տէրը կվարձատրի քեղ սորա համար:

Ա.ԳԱ.ԹԱ. (բացասական նշան տալով, դառնութեամբ):

Դուք չէք արժանի յիշել Աստուծու անունը:

ՈՅԼՅ, (հեղութեամբ):

Տիկին Շտերն, լաւ կշռադատեցէք ձեր խօսքերը:

Ա.ԳԱ.ԹԱ.:

Ինչո՞ւ համար են ձեր խօսքերը Պ. Ռոլֆ: Նատ գիշերներ ես մը-տածել եմ, թէ ի՞նչ պէտքէ անեմ և խօսեմ եթէ պատաշենք միմեանց ինչպէս այսօր, և միշտ իմ զգացմունքներս և մտածութիւններս այդ բանումն են կայացել, ինչ որ ես այժմ ասացի (բառաւով թէպէ իդան) ես էլ մայր չունիմ: Ես միայն որդի ունիմ: (Իդա նու-լոցած՝ նախա-մէ ալուար վլըայ: Ադալու ճօդէնո-մէ նորան, ակնո-մյայնը պահելով): Երբ գիւղից ես հեռացայ, կամենալով ճանաչել աշխարհը և չիմանալով ուր գիմել, զգացի քաղցածութիւն, այն ժամանակ ես մտածեցի ձեր մասին—իմ «Հարուստ մօր մասին— և վճռեցի պարտել գտնել ձեզ: Լրագիրներից ես տեղեկացայ, թէ ուր է ձեր բնակութիւնը . . . : Եկայ այն տեղ. գիշեր էր ժամանակը, գտայ ձեր բնակարանը: Զեր բնակարանի լուսամուտները շքեղ զարդարուած էին. ձեզ մօտ շատ հիւրեր կային: Փողոցից ամեն երեւումեր և ես լսումէի ձեր երգեցողութիւնը, գիշերը ջերմ էր, լուսամուտները բաց էին, ես մոռացել եմ այն երգը, դուք երգումէիք մօր սիրոյ մասին առ իւր նա-րելի մանկիկը: Դուք հիանալի երգումէիք, բոլոր հիւրերը ծավա-

րումէին ձեղ հրճուանօք: Իսկ ինձ համար ձեր երգը ամենից սոր-սափելի էր թվում՝ որքան որ մինչեւ այն օրը լսել եմ: Ես անցայ վողոցը դէպի մէկ ուրիշ տուն, և երգուեցի լաւ համարել քաղ-ցածութիւնից մեռնել, քան գալ ձեղ մօտ. երգուեցի յաւիտեան մոռանալ ձեղ, ինչպէս դուք ինձ մոռացել էիք: Ես վճռեցի իմ բոլոր կեամքում մնալ առանց մօր: Գնացէք, երգեցէք թատրոն-ներում, կոնցերտներում մայրական սիրոյ մասին «առ նազելի մանկիկն»: Այն սարսափելի գիշերը ես թողի ձեղ: (Հեռանո-մէ բառի):

ԻԴԱ:

Ագաթա. (Ըստ յայնով): Ուշքս գնո՞ւմէ: (Ոնչո-մէ բազկարու-վլըայ):

ՊԵՏԿԵՐ ԵՐԿՐՈՒ ԴՐ

Ագաթայի սենեակը տանկիր տակ՝ աղքատ դասաւորութեամբ: Դէպի ձախ պառ-սուհան. նոյն իսկ կողմում թարեք վարագուրով: Խորքումը դուրս ելնելու դուռ, դէպի աջ՝ Տ. Վոլմուտի սենեակի գուռն է: Պատուհանի մօտ սեղան՝ երեք աթոռ-ներով: Կամօդի վերաց դարձ է յետին կողմը՝ դրան մօտ մի քանի անօթներ, քանի մի գրքեր եւ փոքրիկ պատկեր:

ՏԵՍԻԼ ՀԻՆԳԵՐՈՐԴ.

ՔԵԹԻՆԵՆ. ԺԵՄՊ Ա.ԳԱ.ԹԱ.

(Բէմէ վլըայ ու ու զնայ):

ՔԵԹԻՆԵՆ. (դրսէց ծեծումէ դուռը մի քանի անդամ):

Ագաթա. Տ. Շտերն: (Ներս է բայիս): Նա տանը չէ: Գրասենե-կից վաղուց նա դուրս է գնացել . . . : Սպասեմ վոքր ինչ: (Նը-դառա-մէ, խօսա-մէ կասկածանուած): Կարելիէ նա առաքինի կնոջ դեր է խաղում: (Երգո-մէ):

Մայրիկ, հայրիկ մտիկ տուէք երեխային.

Նորան ամուսին կընդունիմ, ի՞նչպէս էք կամենում:

Ա.ԳԱ.ԹԱ. (ներս է գալիս, մոախոչ, նկատելով Քէթիւնին՝ անբաւականութեամբ):

Ինչո՞ւ համար է նա այս տեղ:

Քէթնէն: (շարունակումէ երգել):

Այնպէս գեղեցիկ է յիրաւի.
Ահա մոխիկ արէք, նայեցէք
ի՞նչպէս նա սիրուն խօսումէ:

Ա.ԳԱ.Թ.Ա. (մօտենումէ նորան):

Դու դարձեալ եկել ես: Քէթիւն:

Քէթնէն: (վերկենալով տեղից):

ՈՇՀ. ի՞նչ երևելի տիկնոջ տեսք ունիս: Ես էլ կարող եմ այսօր
այդպէս երևելի տիկին լինել, ես եկել եմ վճարելու քեզ իմ
պարտքս: (Փողէր ժնու-մէ սեղանի վըրայ): Ահա, համարի՛ր:

Ա.ԳԱ.Թ.Ա.:

Ես զարմացած եմ:

Քէթնէն:

Ինչո՞վ: Որ վճարումեմ իմ պարտքս:

Ա.ԳԱ.Թ.Ա.:

Այո՛: Այս դրամները վաղուց արգէն ես կորցրած էի համա-
րում: Ես տուփ քեզ այդ փողերը միայն նորա համար, որ այն մի-
ջոցին շատ կարիք ունեիր:

Քէթնէն:

Նորա փոխարէն այժմ ես փողի պակասութիւն չունիմ, այո՛,
այո՛, (համարէլի ժամանական լսեման-նետածէ): Համարեցէ՛ք: (Մօտենու-մէ պա-
տէ հօդ ժուրիկ հայելին և մինչդեռ Ադաման համարելով դրամնէրը՝ պա-
հու-մէ համարէ մէջ, նա ս-դում-մէ սանդրաժ ճակէրը և երժու-մէ):

Խժ կատարինէ թանկազին:

Կէ արի շուտով ինձ մօտ:

Ես տանջվումեմ տպանելով

Վաղուցուանից քեզ ինձ մօտ:

Ա.ԳԱ.Թ.Ա.:

Նորհակալ եմ քեղանից: (Մօտէ և առաջև նորա վըրայ առջու-
նետածէ): Բայց առաջ ինձ, քեզ մըտեղից են յանկարծ փողեր: Դու
այդպէս զարդարուած ես:

Քէթնէն: (փոքր ինչ յուզուած):

Ո՞րտեղից: (Ալիտագու-մէ ժողովալ): Նատ մի հարցնիլ: Մեր հա-
շիւը միմեանց հետ վերջացաւ: Համբուրի՛ր քո գժգոյն գեղեցիկ
որդուն: Մնաս բարեաւ: (Հայելոյ ճօռից անցնելով՝ կանչնու-մէ և
երժու-մ):

Փոքր ինչ համբերիր

Նուտ քեզ կըլինիմ:

Ա.ԳԱ.Թ.Ա. (հանելով կամուկից գոգնոցը, կտակումէ):

Գնաս բարեաւ Քէթիւն:

Քէթնէն:

Դուրս եմ գնում: (անցնելով՝ համբէ ճօռից՝ երժու-մէ)

Թանկագին կեանքի համար էլ

Ես կլինիմ վստահ քո կինդ:

(Տեսնելով՝ պատիւր դրաժ կամուկից վըրայ): Այս ում պատկերն է.
Ջահիլ տղայի պատկեր է: Քո ամուսնոյ նման չէ: Այլ կարելի է,
վերջապէս, և դու նոյնպէս . . . :

Ա.ԳԱ.Թ.Ա. (զարմանալով):

Ի՞նչ: (Քէթնէնը վախեց վայր և յժու-մ պատիւր դրաժ կամուկից ինչուրայի ինըլով): Ի՞նչ զարմանալի մողեր ունիս դու: Դուրս գնա:

Քէթնէն: (աշխատումէ ծիծաղել):

Գնումեմ, գնում: տիկին առաքինի: Միայն աւելի բարեսկրտ
եղիր: (Կամենու-մէ պատիւր դրաժ կամուկից դրաժ արեդը):

Ա.ԳԱ.Թ.Ա.:

Այլ ես ձեռք ցտաս նորան (առելի հանդարայ): Թագ:

Քէթնէն:

Դէ, կիթողնեմ: (Դուրս գնուածաւ): Մնաս բարեաւ: (Արդէն դրա-
մէջ՝ ապացու-նետածէ): Բայց պու, ձշմարիտ որ յիմար ես, Ագաթա.
այդպէս ամեն բանում խեղճութիւն ես քաշում:

Փողով կարելի է կշտանալ.

Իսկ անփառ սովոր մօտենալ:

(Յետէ դաշտու-մ): Դու այնպէս գեղեցիկ, բայց թոյլ որդի ու-
նիս և նա պէտքէ մենակ ցամաք հացով կերակուի: Եթէ ես քո

տեղն լինէի, քո ջահիլութիւնով և գեղեցկութիւնով . . . :

ԱԳԱԹԱ. (բարկութեամբ):

Դուքս այս տեղից:

Քէթիւն:

Ո՞չ: (Ա՞սպամէ բէդի բուռը, բուրը ժնալը):

Փող ունեցողը միշտ կոսիտ է.

Առանց փողի, նոյնպէս կարելի է կոսիտ լինել:

(Հետա-իշ)

Ինձ համար մի և նոյն է, մի և նոյն:

Ունիմ փող, թէ չունիմ՝ մի և նոյն:

ՏԵՍԻԼ. ՎԵՅԵՐՈՐԴ.

ԱԳԱԹԱ. ՄԵՆԱԿ. ՅԵՏՈՅ. ՀՈՒԳՈ. ԲԵՄԻ ԵՏԵՒԻՑ:

ԱԳԱԹԱ. (հանդարտ):

Թեթևամի՛տ արարած, ինչպէս ուրախ թռչնիկի պէս ծլլումէ նայ առանց մտածելու: (Դառն իշրայլ ծիժառակալավալ): Եւ նա ինձ քարի է ցանկանում. նա իմ հասակակից խաղճնկերներից ամենից լաւն է: Բայց նա այլ ես այս պատկերիս ձեռք չի տալ (վէր է առնում զննումէ): Ի՞նչու համար գրել եմ քեզ երեելի տեղում: Ի՞նչպէս ես մտիկ տալիս ինձ . . . : Ահա բոլորը՝ ինչ որ նորանից մնացել է մօրաքրոջս . . . : Այսպէս էր մէկ ժամանակ իմ հայրը. քարի, երիտասարդ: Եւ ես նորան ինչպէս կըսիրէի, բայց նա առումէ՝ թէ խայտառակեց մեղ իւր վարքով: (Սարսակից բուռը՝ վայր է իշխան պատիկէրը: Դնելով պատիկէրը կամուրէ վէրայ՝ նորումէ հօդը դրած անուած վէրայ և ծածկումէ երեւը յեւ+էրով): Այլ ինչպէս լաւ է և քաղցր քարի ծնօղներ ունենալ, նոցա աչքերի առաջը մեծանալ և նոցանից սիրուիլ. Ա՞լ. ինչ երազ է: Մայրիկ: Բոլորը վերջացել է: Դու վաղուց ինքդ հրաժարուեցիր ինձանից, իսկ ես երբէք չեմ դառնայ դէպի քեզ: (Բէմի երեւից լուսումէ մանկան յայն, նա յանկանդ վէր է նորում և հօդումումէ լուսամուտին): Իմ որդու ձայնը չէ արդեօք: Ոչ, այս նորա գեղեցիկ ձայնը չէ: Միթէ բոլոր բովին չի վերադառնայ այսօր Տ. Վոլմուտ երեխայի հետ: Հուգօ:

Իմ քտղորի՛կ զաւակս: Իմ գանձս: Ուր ես՝ զու: Քո մայրդ այս-
տեղ է, հաւանական է, որ զու սովել ես խղճուկ (վէր է առնում
վաւարանից ըմպանակը կալով և դնումէ ուղանի վէրայ): Ահա կամն
էլ պատրաստ է. եկ, եկ շուտով: (Առնումէ ուղանի արկից սիր-
աց, յէտոյ դրժալ, դանակ, կրտսած հայ): Այս, մենակ հաց. անուշ
կերակուրներ ուտացնելու քեզ փող չունիմ: (Լուսամուտի հօդ): Դէ
մի՛ թողնիր ինձ մենակ այսպէս սև մաքերով: Ա՞լս, ինչպէս ես
մենակ տխուր եմ, Հուգօ, առանց քեզ:

ՀՈՒԳՕ.

Մայրիկ, մայրիկ:

ԱԳԱԹԱ:

Հուգօ, իմ նազելի՛ մանկիկ, որդեակ իմ:

ՏԵՍԻԼ ԵՅԹՆԵՐՈՐԴ.

ԱԳԱԹԱ. ՀՈՒԳՕ. Տ. ՎՈԼՄՈՒՏ:

ՀՈՒԳՕ. (վազումէ. Տ. Վոլմուտ գալիս է նորա ետեւից):

Ե՞ս եմ, մայրիկ:

ԱԳԱԹԱ. (նորա առաջ ծունկ չոփելով՝ գրկումէ նորան):

Ուզորդ այդ գու ես: Մէկ անգամ էլ ինձ համբուրիր, զի՞ր թու-
շըդ իմ թուշիս վերայ, ահա այսպէս: Ինչպէս, իմ աղաւնեակս,
գու տաք ես և այսպէս տաքացնումես իմ սիրոր: Ինչու համար
այսօր ուշ վերադարձաք տուն (Նայելով Տ. Վոլմուտի վէրայ, ո՞յ
շատապահ դիմուլ և նաշնառէլ վէր տանելով՝ վագումէ ի-ը սենեակը):
Ո՞րտեղ էլիք գուք այդպէս երկար միջոց սողում, տ. իսխունջ:

Տ. ՎՈԼՄՈՒՏ. (վերադառնումէ ծիծալելով):

Տիկին խխունջ: (Յէտոյ ախուր կիշրայլ): Այդ խօսքը լաւ խօսք
է: Եւ եթէ երբ և իյէ համնի այն ժամանակը՝ երբ կարող լի-
նիք ասել, թէ ես ձեր հրամանները գանդազ եմ վկատարում ինչ-
պէս խխունջ, —այն ժամանակ, նախ քան համնիլս այդ օրին, ես
ինքս կհեռանամ ձեզանից: (Եսում նորումէ և աչերը երին+ը բարձ-
րացնելով): Մի բարկանար: (Ա՞սպամէ ի-ը սենեակը):

ԱԳԱԹԱ. (վեր առնելով իւր որդուց գլխարկը եւ վերարկուն),

Հուգօ, ահա այսպէս, հանուի՛ր: Դու սոված ես, աղաւնեակս:
(Հուգօ էլու շաղթելով): Այդ ի՞նչ ծաղիկներ են գրանումդ:
ՀՈՒԳՕ:

Մայրիկ, այդ ծաղիկները ինձ տուեց մի պատուելի տիկին:

ԱԳԱԹԱ:

Ի՞նչ կին:

Տ. ՎՈԼՄՈՒՏ. (Դուքս գալով իւր սենեակից առանց գլխարկի եւ թաշկինակի):

Ի՞նչ գեղեցիկ կին էր այն տիկինը և ի՞նչ թանկագին շորեր էր
հագել. նա մեղ հանդիպեց, երբ մենք այս տեղ էինք գալիս:
ՀՈՒԳՕ:

Եւ ի՞նչպէս նա մոտիկ էր տալիս ինձ վերայ, մայրիկ:

ԱԳԱԹԱ:

Նի՞ստ և կեր հոգեակս. (Խարացնելով նորան ուղանք ճօռ, պալիս է
էրուր հաց և ըմպանակը կալուզ: Հուգօն ուսումն ուրել):

Տ. ՎՈԼՄՈՒՏ.

Այժ, երբ տեսաւ երեխային, նա կանգ առաւ: Ո՞վ Աստուած.
պատկերը, ուր դրի նորա պատկերը (Վերադին վաղա-մեծ է-ը ունեակը):
ՀՈՒԳՕ:

Մայրիկ, ես տեսայ, որ տիկինը լալիս էր:

ԱԳԱԹԱ:

Ի՞նչ բանի վերայ ես խօսում, հոգիս:

Տ. ՎՈԼՄՈՒՏ. (վերադառնումէ ասցետուն պատկերով):

Այժ նորա աչքերում արտասուք կար, հաւատացնումեմ պա-
տուվս և նա ի՞նչպէս քաթան դժգոյն էր, (հիացման). բայց ի՞նչ-
պէս հազնուած էր, ի՞նչպէս զարդարուած, նա հարցրեց ի՞նձանից
թէ այդ ում երեխան է, և երբ ասացի . . . :

ՀՈՒԳՕ. (ոմանսակից քիչ կաթ խմելով):

Այն տիկինը ինձ համբուրեց:

Տ. ՎՈԼՄՈՒՏ.

Այժ, նա համբուրեց նորան . . . :

ՀՈՒԳՕ:

Բայց ես չէի կամենում, որ նա ինձ համբուրէր: Եւ նա այնպէս
ախ էր քաշում այն ժամանակ (Ադանտ. շո-ա աւելից վէր է ինու-մ)՝
ինչու համար դու վեր կացար, մայրիկ:

ԱԳԱԹԱ. (Զանք անելով հանդարտ երեւել):

Վերջացրու քո կաթդ: (Դարձալով ուշուն Տ. Ա. Յ. Յ.): Եւ
ի՞նչ առաց այն տիկինը:

Տ. ՎՈԼՄՈՒՏ.

Տիկինը հարցրեց յետոյ ձեր մասին. ես պատասխան տուի.
«մենք խեղճ մարդիկ ենք, դուք տեսնումէք», Բայց ես սուտ չեմ
ասում, ձեզ վերայ ոյինչ վատ բան չասաց նա. Ես ասացի (յափշ-
տակու-ած), որ դուք վառաւոր, հազուագիւտ մայր էք, «ուղորդ
որ նա խեղճ է, բայց աշխարհումը ոչ մի աղնիւ մայր նորա պէս
բարի չէ»: Ես նորան պատմեցի էլի մի քանի բաներ:

ԱԳԱԹԱ. (քիչ ժպտալով):

Ի՞նչ սուտեր են:

Տ. ՎՈԼՄՈՒՏ.

Ի՞նչպէս նա ծանր ախ էր քաշում և յանկարծ շուռ եկաւ դէ-
սի ինձ թիկունքսվ, հանեց գրանից պատկերը և ի՞նչ որ գրեց
նորա վերայ մատիսով: «Տուէք երեխայի մօրը, ասաց տիկինը»:
Ես ճանաչումեմ նորան. բարի եղէք նորա հետ և սիրեցէք նո-
րան: Թոյլ տուէք ինձ մէկ էլ ձեռքը բռնեմ և ասեմ նորան՝
«Մնա՛ բարեաւ և բախտաւոր լինիս»: Այդ միջոցին տիկինը տուեց
նորան և իւր ծաղիկները: «Նորհակալ եմ», ասաց նորան Հուգօն:
Այն ժամանակ տիկինը բաց թողեց մեզ (Կացման) այնպէս հան-
դարտ և տիսուր, որպէս թէ ի՞նքն իրանը չէր: Ահա և նորա պատ-
կերը:

ԱԳԱԹԱ. (առնումէ եւ կարդումէ ինքն երան):

«Ես այս ըոսլէիս այստեղից գնումեմ և բոլորովին: (Այդ միջոցին
ուսումն ծեծոս-մէն):

Տ. ՎՈԼՄՈՒՏ.

ԱԳԱԹԱ. (չի լսում, նստումէ յառակի վերաց Հուգօյի ոտների մօտ, խօսումէ
հանդարտ):

Հուգօ, նազելի որդեակ իմ: Ներիր ինձ: Ա՞ն, ապրեշումի և

տարիքների չափ նա չի զարգացել: Ձեր ստացած միջոցներով հեշտ չէ պահել երկուսին (նայում է չափ կողմը) և այս բնակարանը փոքր սենեակով ննջարանի համար . . . (աշխատում է ժաժիւլ իւր յուղ- մանուլ, ժաղանուլ): Խոստովանվումեմ, որ թէպէտ դուք բնակումէք մեր տանը, բայց այս բնակարանում ձեզ անկարելի է պաշտպանել ձեր որդու առողջութիւնը:

Տ 01.ՄՈՒՏ.

Դորա հետ և լուսամուտների առաջը ցխոտ բակ . . . : (Զուելով):
Ա և ներողութիւն եմ խնդրում . . . :

Տ 01.Ց.

Ենորհակալ եմ ձեղանից . . . : Բացարձակ ասեմ ձեզ, Տ. Շտե-
րլն. ես կարծումէի առաջարկել ձեզ, այսինքն աւելի ձեր որդու
համար . . . : Այս տեղ կենալը նորան կտկարացնի: Ինձպէս
մենակ ազապ տղամարդի համար, չափազանց ընդարձակ է մեր
տունը: Ես ունիմ երկու երեք բոլորովին ազատ սենեակներ, լու-
սամուտներով դէպի պարտէզը, գրասենեակի մօտ, որի մէջ դուք
պարապումէք: Այդ սենեակները սպահարան եմ շինել, ուր ցը-
րուած են զանազան ցեցից վնասուած մանր մունը իրեւ, որոնք
միակերպ յարմարութեամբ կարող են շարունակ փշանալ այս ըլ-
նակարանումն էլ: Ես շատ ուրախ կլինիմ, եթէ դուք վճռէք
փոխել միմեանց հետ մեր բնակարանը:

Ա.ԳԱ.ԹԱ. (Ընդհատելով հազիւ ծածկելով իւր անվստահութիւնը):

Դուք շատ քաղցրասիրտ էք պ. Պոլի: Ես ձեղանից շատ շնոր-
հակալ եմ, բայց ես կարող չեմ վճարել ձեր առաջարկած բնա-
կարանի վարձը:

Տ 01.Ց.

Ներեցէք, դուք մոլորվումէք . . . : Ես արդէն աւելացրի ձեր
ոռձիկը ձեր ծառայութեանց համապատասխան, որովհետեւ ձեր
ծանր պարտաւորութիւնները վարձատրվումէին շատ սակաւ ոռ-
ձնըկով: Նեղութիւն կրէք նայել այդ տոմսակի վերայ, որի մէջ նը-
շանակաւած են ձեր նոր բնակարանի մուտքը և ծախքը, և եթէ
պէտք լինի ձեզ աւելի վճարել, այն ժամանակ էլի մի բան կմնայ

ձեր ոռձկից որով կարելի կլինի, որ ձեր որդու թշերը պարարտա-
նան և թարմանան: Մի' այդպէս տխուր նայէք ինձ վերայ, և
համաձայնեցէք մաքուր սրտով:

Ա.ԳԱ.ԹԱ.:

Ներեցէք ինձ: (Վ. Եր է կենում հօպէնումէ նորան և ասում յուղ-
մանուն, կուայայն): Ասացէք մում կողմից էք անում ինձ այդպիսի
առաջարկութիւնը:

Տ 01.Ֆ. (Նորապէս կիսահայն):

Ինչպէս կասկածոտ էք դուք, բայց ես հասկանումեմ ձեզ: Հա-
ւատացէք ինձ, որ ես ճշմարիտը կասեմ:

Ա.ԳԱ.ԹԱ. (Նոր մտիկ տալով նորա երեսին. ակամսց յուղուած՝ ձայնով):

Ա.յո՛, ես հաւատառումեմ ձեզ:

Տ 01.Ց.

Եթէ ես ասեմ, թէ ձեր մայրը ոչինչ չգիտէ իմ առաջարկու-
թեան մասին, բայց թէ ես ինձ պարտք եմ համարում տալ ձեզ
ուրիշ բնակարան, դուք այն ժամանակ ինձ կհաւատաք:

Ա.ԳԱ.ԹԱ. (գգացուած):

Ա.յո՛, ես ձեզ հաւատումեմ:

Տ 01.Ց.

Ենորհակալ եմ ձեղանից: (Բարձրայայն): Ինձ մօտ արի ջահիլ
տղամարդ: (Հուգօ լսաբան հօպէնումէ նորան: Բոլցը բանումէ նորա
յեւուլ և յեւոյ նստացնումէ իւր ծնկան վերայ): Կամենումես դու մեծ
ու ուժեղ մարդ դառնալ, Հուգօ: (Հուգօ գլուխ է անում): Կամե-
նումես ապրել բարձր, ընդարձակ սենեակներում, որտեղից երե-
ւումէ բոլոր այգին և ուր ոչոք ուրիշ մարդ չի բնակում. կամե-
նումես այն այգիումը խաղալ միշտ՝ ինչպէս ձեր այգում: Երբ ու-
ղենաս: Կամենումես արգեօք, իմ տղամարդ:

Հ 01.Գ.Օ.

Ա.յո՛, կամենումեմ: Բայց ինչո՞ւ դու չասացիր, թէ և Տ. Վոլ-
մուտն էլ կապրի մեզ հետ:

Տ 01.Ց.

Նա էլ նոյնպէս պիտի ապրի ձեզ հետ, խաղալու է քեզ հետ
ինչպէս հիմա: Մենք ի՞նչ կանենք առանց նորան:

Տ. ՎՈԼՄՈՒՏ, (ՀԴՀՄՏ ԹԵ ԻՆԸ ԱՆՔ յուզմունքից, դնումէ երբեմն ձեռները կուրծ-
քի վերայ երբեմն ծածկումչ երեսը):

Ո՛վ բարի մեծահոգի, պ. Պօլֆ: Ի՞նչ օրուայ համար ապրեցի ես—
այսպիսի հին սպիտակամաղ պառաւս:

ԲՕԼՖ:

Ես տեսնումեմ ձեր խօսքերից, որ դուք համաձայն էք: Բայց
ի՞նչ կասէ մեզ քո մայրիկը, իմ խղճուկի երեխայ . . . :

ԱԳԱԹԱ. (աշքերումը արտասուրք):

Ո՛չ պ. Պօլֆ. (Բանում նորա յետքը, ի՞ստայն): Ա՛խ, ի՞նչ ասեմ
ես: Ես ձեզ չեմ հասկսնում . . . : Չեմ հասկանում՝ կեանքը:
Նորան որ ինձ մայր է կոչվում: Ես պատաժիսան տուի՝ «ոչ, ոչինչ
չեմկամենումքեզանից»: Այժմ դուք ինձ համար օտար մարդ,
առաջարկումէք օգնութիւն, և Աստուած թելագրումէ ինձ ասել
ձեզ այո՛, ես շնորհակալութեամբ ընդունումեմ ձեզանից օգնու-
թիւն: (Սաստիկ շարժուած), ես պէտք է . . . :

ԲՕԼՖ. (նորան ընդհատելով. բարձրաձայն, ձեւակնումէ իբր նորա խօսքերին պա-
տասիսն է տալիս):

Դուք ճշմարիտ էք ասում՝ նախ քան ձեր որոշումը թողնելու
հին բնակարանը՝ ձեզ հարկաւոր է տեսնել նորը, այդ հասկանալի
է: Զննեցէք այժմէն իսկ, եթէ ձեզ հարկաւոր է, առէք ձեզ հետ
և Տ. Վոլմուտին և ձեր որդուն, իմ ծառան ձեզ ներբեռումը ըս-
պասումէ և կառաջնորդէ: Իսկ ինձ թոյլ տուէք այս տեղ մնալ
մէկ րոպէ (Ճպառլ) նոյն իրերի օգտի համար, որոնք պէտք է
տեղափոխուեն այստեղ: Եւ եթէ դուք համաձայն էք, հենց է դուց
կարող ենք տեղափոխուել: (Կիստայն): Ի՞նչու համար էք սխմում
իմ ձեռքը: Ես արդարեւ ոչ մի բան չեմ զոհաբերում, բայց ձեզ
հոգւով ափսոսումեմ և յարգում բոլոր սրտովս:

ԱԳԱԹԱ. (սաստիկ յուզուած ծածկումէ ձեռքով աշքերը, յետոյ իջեցնումէ ձեռ-
քերը սրտի վերայ եւ հեռանալումէ լուռ ու մունջ, ընդհատ ձայնով):

Երթանք Հուգօ. Երթանք: (Պանում նորա հետո):

Տ. ՎՈԼՄՈՒՏ. (Թոտ է վազում Պօլֆին եւ համբուրումէ նորա ձեռքը, յառաջ
քան նա ժամանակ է գտնուր ձեռքը յետ քաշել: իսկ յետոյ համբուրումէ նորա
եւ միւս ձեռքը):

Այս իմ կեանքի ամենաբախտաւոր օրն է, նորան ես երբէք
չեմ մսուանալ (առաջ դուրս է գնում):

ՏԵՍԻԼ ԻՆՉԵՐՈՐԴԻ.

ԲՈԼՖ միայն Յետոյ ՖԱԲՐԻՑԻՈՒՄ.

ԲՈԼՖ. (նայումէ դուքս գնացողների վրայ՝ ետեւից):

Բարի, բարի մարդիկ են . . . : Ի՞նչ է պատահել ինձ: Ես չեմ
յիշում այսպիսի օր, որ այնպէս յուզուած լինէի, ինչպէս այսօր:
Այս, համարեած թէ դատարկ սենեակում բնակումէր նա. այս
նշանաւոր, հպարտ բայց հազուագիւտ բարեսիրտ մատաղահաս
կինը. (Դրակա լովում դրան ծեծելը): Դուռը ծեծումեն: Ա՛, ես
այս տեղ եմ . . . : Ներս եկէք:

ՖԱԲՐԻՑԻՈՒՄ: (Սաստիկ ծերացած սպիտակ մազերով, աղքատ, բայց մաքուր
հագնուած պարկեցտութեամբ ներս է մտնում, կանգ է առնում դրան առաջը եւ
ասումէ ցած ձպնով):

Պ. Պօլֆին ես պատիւ ունիմ տեսնելու:

ԲՕԼՖ (բարձրացնումէ իւր ձեռք ականջին):

Ես ձեզ յըհասկացայ:

ՖԱԲՐԻՑԻՈՒՄ: (շատ բարձրաձայն):

Կարծումեմ պ. Պօլֆի հետ պատիւ ունիմ տեսնելու:

ԲՕԼՖ. (նայումէ նորան զարմանալով):

Այս. ինձ Պօլֆ են կոչում. բայց ի՞նչպէս գտաք ինձ այստեղ:

ՖԱԲՐԻՑԻՈՒՄ.

Ներողութիւն եմ ինդրում ձեզանից: Ինձ ասացին ներքեւ,
սրահումը, թէ դուք այս տեղ էք գտնվում: Եւ որովհետեւ ես ար-
դէն երկու անգամ անըախտ գտնուեցի տանը ըրհանդիպելու: . . .

ԲՕԼՖ:

Ինձ ոչ ոք չի ասել ձեր մասին, իսկ ձեզ ի՞նչ պէտք է:

ՖԱԲՐԻՑԻՈՒՄ:

Ինձ կոչումեն Ֆաբրիցիուս . . . : Բայց ինդրեմ ձեզանից բարի
լինիք, ասէք, ի՞նչպէս պէտք է ինձ խօսել — բարձր թէ ցած
ձպնով:

ԹՕԼՅ. (Նոր նազումէ նորա վերաս գարմանալով, բախեկամոբար):

Զեր ձայնը փոքր ինչ անհաւասար է. պ. ֆարբիցիուս: Հաւանական է դուք երկար միջոց ապրել էք միայնութեան մէջ, եթէ ձեզ այնպէս խորիժ է թվում ձեր սեպհական ձայնը:

ՖԱԲՐԻՑԻՈՒՍ. (աչքերը ցած):

Այս, ես յիրաւի ապրել եմ երկար միջոց միայնութեան մէջ . . . Ես ուղղակի անցնեմ իմ վստահութեան պատճառին, որի համար անհանգիստ արի ձեզ, այն մարդուն, որ աղնուութեամբ պաշտպանեց գրչով և խօսքով (դադար առնելուց յետոյ, վերաբին նոյն յայնով) . . . : Այնպէս չէ՞ արդեօք, դուք չէ՞ք վախենայ:

ԹՕԼՅ. (փոքր ինչ անհամերութեամբ):

Ո՛չ, խօսեցէք:

ՖԱԲՐԻՑԻՈՒՍ.

Որ կենդանի խօսքերով և մամուլի ձեռքով քարոզումէր կարել-ցութիւն դէպի զջումը (դադար առնելուց յետոյ) դատապարտեալների, հիմնեց անդամ ընկերութիւն բանտարկութիւնից ազատուտներին օգնելու համար (լուսա-մէ):

ԹՕԼՅ.:

Հաւանական է դուք նոցանից մէկն էք:

ՖԱԲՐԻՑԻՈՒՍ. (շփոթուած):

Այս, նոցանից մէկն եմ:

ԹՕԼՅ. (փոքր լուսութիւնից յետոյ):

Որքա՞ն ժամանակ բանտարկութեան մէջն էիք:

ՖԱԲՐԻՑԻՈՒՍ. (հանգարաւ):

Քսան և չորս տարի:

ԹՕԼՅ. (ապշած):

Դուք ասացիք—քսան և չորս տարի (Ֆաբրիցիուս գլուխ է առնում): Ինչո՞ւ համար այսքան երկար միջոց:

ՖԱԲՐԻՑԻՈՒՍ.

Սպանելու ձեռնարկութեան համար:

ԹՕԼՅ. (ակտմայ յետույթ է գնում նորանից. ֆաբրիցիուս ցաւակցաբար ժպտումէ շարժ մունք է անում, իբր թէ կամենումէ ասել՝ «ոհ, մի վախենազ ինձանից» ։ Պօլ-ֆը ուշքի գալով, նստումէ հանդարտ):

Նստէ պ. ֆաբրիցիուս:

ՖԱԲՐԻՑԻՈՒՍ. (կակուղ եւ թուլ ձայնով):

Ենորհակալ եմ ձեզանից: (Նապա-մէ իսուր ինչ նորանից հետո-անունէ ժայռի վկայ):

ԹՕԼՅ.:

Ես չեմ հասկանում . . . : Դուք մարդասպանի նման չեք: Պատմեցէք, այդ ի՞նչպէս պատահեցաւ:

ՖԱԲՐԻՑԻՈՒՍ. (հանելով գրանից թղթեր):

Թոյլ տուէք նախ առաջարկել ձեզ այս թղթերը, իմ վիայագրերը: Փահանան և Բանտապետը սոցա մէջ վկայումեն, թէ բոլոր իմ բանտարկութեան միջոցում ես լաւ եմ վարուել, և թէ իմ լաւ վարք ու բարքի համար, արդէն քսան և չորս տարվայ իմ միայնակ բանտարկութիւնից յետոյ արձակուեցայ ազատութիւն վայելելու:

ԹՕԼՅ.:

Կընշանակի ձեզ ներել են: (Ֆաբրիցիուս գլուխ է առնում): Հապայնալի խստագոյն պատժի պատճառն ի՞նչ էր:

ՖԱԲՐԻՑԻՈՒՍ. (պարկեցառութեամբ):

Արժանի՞ էի արդեօք ես այդ պատժին: Ուղիղն ասեմ, ես ինքս էլ ըրգիտեմ: Ես անբախտ մարդ էի, խորին և ծանր անպատվութիւնները ինձ գաղան դարձրին: (Ո-զզո-մէ իշան): Ես կամենումէի ասել՝ թունաւորեցին իմ կեանքը, խայտառակեցին: Բայց այս ձեզ համար հետուքրքիր չէ, իմ ջահելութեան պատճառաւ ես ընկայ վատ ընկերութեան մէջ, դագարեցի գործելուց և չունելով ոչ մի միջոց ապրուատի, վերջը զգացի քաղցածութիւն:

ՏԵՍԻԼ ՏԱՄՆԵՐՈՐԴ.

ՆՈՅՆ ԱՆՁԻՆՔ Եւ ԱԳԱԹԱ:

Ագաթա մտնումէ աննկատելի կերպով, բայց կանգէ առնում դրան մօտ, նա կամենումէ շարժողութիւն անել, որպէս զի դարձնի իւր վերայ ուշադրութիւն, բայց հետաքրքրուելով ֆաբրիցիուսի պատմութիւնով, մնումէ տեղումը եւ լսումէ):

ՖԱԲՐԻՑԻՈՒՍ, (շարունակելով):

Երբ քաղցածութեան զգացութիւնը սասատկացաւ, ես մարդկանց անիծելով անցնումէի մեծ քաղաքում հարուստ տների լուսամուտների տակից . . . : Քաղաքի անունը չէ՞մ տալ . . . : Գիշերէր, ջերմ ամառուայ գիշեր: Լուսամուտներում բայցի մէկից լոյս չէր երեւում: Այդ պատուհանը բաց էր: Ես կանգնեցի նորա առաջ զբոսարանի վանդակի մօտ և տեսնումեմ մէկ տղամարդ առանց շորերը հանելու գիշանի վերայ քնած: Այն րոպէին ինձանում սկսաւ խօսել մի սաստիկ ձայն. այդ ձայնը քաղցածութեան ձայնն էր: «Մտիր լուսամուտից, վեր առ ինչ կըդոնես, փող շինիր, նորանով հաց կունենաս, որ չըմեռնես քաղցածութիւնից, և այն ժամանակ փախիր այդ քաղաքից, որքան կարող ես հեռու: »

ԱԳԱԹԱ, (շարժողութիւն է անում, կամենալով դարձնել իւր վերայ ուշադրութիւն, մօտենումէ Ռոլֆին):

Ես վերադարձայ, պ. Ռոլֆ:

(Ֆաբրիցիուս վեր է կենում շուտով, յուղուած գլուխ է տալիս):

ԱԳԱԹԱ, (նկնակէս փոքր ինչ շփոթուած դժուարութեամբ է խօսում):

Երեխան արդէն այգիումն է, գուք, ի հարկէ, կըներէք: Նա կամենումէր վազվազել այգիումը: Այս, որքան ուրախանումէ:

ԲՈԼՅ:

Վերջապէս, գուք համաձայն էք:

ԱԳԱԹԱ:

ՄԵծահոգի, բարի Պ. Ռոլֆ: (Ալուսում նարա յեւուլ):

ՖԱԲՐԻՑԻՈՒՍ, (նպակառ նորա վերայ ինքն իրան):

Նորա, ինչպէս երեւումէ միմեանց սիրումնն: (Բարձրայացն հազիւնալուն): Թոյլ տուեք ինձ երթալու այժմ, պ. Ռոլֆ. Կարելի է միւս անգամ . . . :

ԱԳԱԹԱ, (նաւակցութեամբ եւ վախկոս մտիկ տալով նորա վերայ):

Ո'չ մնացէք, ես գուրս կերթամ:

ԲՈԼՅ: (Ագաթապին):

Ինչո՞ւ համար գուրս երթաք: Ես տեսնումեմ, որ գուք ակամայ լսումէիք նորա պատութեան սկիզբը: (Ագաթայ յուղուած գլուխ է անում): Կարելի է գուք նորա մասին աւելի վատ կարծիք ունիք քան որքան նա արժանի է: (Ֆաբրիցիուլ): Պատմեցէք մինչեւ վերջը: Զահիլ տիկինը ձեզ չի մեղադրիլ անիրաւացի. Նա ինքը գիտէ թէ ինչպէս շատ անգամ կեանքը մարդկանց համար ծանր է լինում: Նայեցէք նորա վերայ. Նա կամենումէ, որ գուք շարունակէք ձեր պատմութիւնը: Բոլոր ձեր ուժը հաւաքեցէք և շարունակեցէք:

ՖԱԲՐԻՑԻՈՒՍ, (Խոնարհութեամբ):

Եթէ գուք կարելի էք համարում:

ԲՈԼՅ, (յետոյ, երբ հայեցուածքով հրաւիրեց Ագաթային նստել):

ՆՍՊԷՔ:

ՖԱԲՐԻՑԻՈՒՍ, (մեղմ):

Շնորհակալ եմ ձեզանից: (Նայուած, պեսաւլով, ոք Ագաթայ բեւ կանգնած է, լուս արելից վեր է կենուած, որպէս նէ ներազնիւն ինդրեւած: Սկզբան յետոյ, եղել Ագաթա նապեց, նա նայուած ալուսի վերայ, յնպէս առաջ):

ԲՈԼՅ:

Գուք քաղցած էիք և ներս մտաք . . . :

ՖԱԲՐԻՑԻՈՒՍ:

Այս: Այս իմ կեանքիս մէջ ամենասարսափելի րոպէն էր:

ԲՈԼՅ, (հեղութեամբ):

Խնդրեմ փոքր ինչ բարձր խօսեցէք:

ՖԱԲՐԻՑԻՈՒՍ:

Ինչպէս կըհրամայէք: Երբ ես մտայ լուսամուտից սենեակը, այդ միջոցին քնած մարդքը զարթնեց և գիշանից վեր թռաւ, ինձ նա կատարեալ հսկայ թռեցաւ: Նա կալս իմ իուշավոսվից և սեղմե-

